Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հուլիսի 23-ի N 1090 - Ն որոշման

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ՝ ՀԵՐԹԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնողների՝ հերթերի կառավարման համակարգին միանալու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից մեկնող բեռնատար տրանսպորտային միջոցների կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնողներին ներկայացվող պահանջները:

2. ՀԵՐԹԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

2. Հերթերի կառավարման համակարգին միանալու նպատակով ավելացված արժեքի հարկ վճարող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ դիմումատու) պետք է դիմի Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե)՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները՝

1) կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ դիմումատուի սեփականության կամ օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի, իրավասու մարմնի կողմից վերջինիս անվամբ տրամադրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետից ոչ ավելի, քան 20

կիլոմետր հեռավորության վրա տեղակայված լինելու վերաբերյալ փաստաթուղթ կամ տեղեկություն.

2) սույն հավելվածի 10-րդ կետով սահմանված պահանջների պահպանվածությունը հիմնավորող փաստաթղթեր, լուսանկարներ, տեղեկություններ կամ տեսաձայնագրություններ.

3) բեռնատար տրանսպորտային միջոցի հերթագրման ծառայությունների վճարի չափի վերաբերյալ տեղեկություն:

3. Սույն հավելվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները կոմիտե են ներկայացվում էլեկտրոնային համակարգով, իսկ էլեկտրոնային համակարգով ներկայացնելու հնարավորության բացակայության պարագայում՝ էլեկտրոնային այլ եղանակով կամ թղթային կրիչով:

4. Կոմիտեն սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված փաստաթղթերը և տեղեկություններն ստանալու օրվան հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում՝

1) այդպիսի փաստաթղթերը և տեղեկությունները բավարար համարելու դեպքում՝ դիմումատուին տրամադրում է հերթերի կառավարման համակարգին հասանելիություն և գրավոր հավաստում է հերթերի կառավարման համակարգին միանալու հնարավորությունը.

2) այդպիսի փաստաթղթերը և տեղեկությունները բավարար չհամարելու դեպքում՝ դիմումատուին ծանուցում է դրա վերաբերյալ՝ առաջարկելով 5 աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել դրա վերաբերյալ տեղեկություն:

5. Սույն հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված տեղեկությունն ստանալուց հետո, կոմիտեն 2 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է սույն հավելվածի 10-րդ կետով սահմանված պահանջների պահպանվածության հանգամանքը և պահանջների պահպանված լինելու դեպքում տրամադրում է հերթերի կառավարման համակարգին հասանելիություն և գրավոր հավաստում՝ հերթերի կառավարման համակարգին միանալու հնարավորության մասին, իսկ այդպիսի պահանջների պահպանված չլինելու դեպքում՝ մերժում է հասանելիության տրամադրումը:

6. Կոմիտեն, սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված փաստաթղթերը և տեղեկություններն ստանալու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում, անհրաժեշտության դեպքում, կարող է կայացնել կուտակային կայանատեղի այցելելու վերաբերյալ որոշում՝ սույն հավելվածի 10-րդ կետով սահմանված պահանջների պահպանվածությունն ուսումնասիրելու նպատակով՝ այցելությունից մեկ օր առաջ դրա վերաբերյալ ծանուցելով կուտակային կայանատեղիի գործունեության իրականացման համար դիմում ներկայացրած անձին, ինչի դեպքում սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված ժամկետը կասեցվում է:

7. Սույն հավելվածի 6-րդ կետում նշված այցելության ավարտի օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում, կոմիտեն սույն հավելվածի 10-րդ կետով սահմանված պահանջների՝

1) պահպանվածության հաստատման դեպքում՝ դիմումատուին տրամադրում է հերթերի կառավարման համակարգին հասանելիություն և գրավոր հավաստում է հերթերի կառավարման համակարգին միանալու հնարավորության մասին.

2) պահպանված չլինելու դեպքում՝ դիմումատուին ծանուցում է դրա վերաբերյալ՝ առաջարկելով 5 աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել դրա վերաբերյալ տեղեկություն:

8. Սույն հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված տեղեկությունն ստանալուց հետո, կոմիտեն 2 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է սույն հավելվածի 10-րդ կետով սահմանված պահանջների պահպանվածության հանգամանքը (ըստ անհրաժեշտության սույն հավելվածով սահմանված կարգով կրկնակի այցելություն կատարելու միջոցով) և պահանջների պահպանված լինելու դեպքում տրամադրում է հերթերի կառավարման համակարգին հասանելիություն և գրավոր հավաստում՝ հերթերի կառավարման համակարգին միանալու հնարավորության մասին, իսկ այդպիսի պահանջների պահպանված չլինելու դեպքում՝ մերժում է հասանելիության տրամադրումը:

9. Սույն հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով, 5-րդ կետով, 7-րդ կետի 1-ին ենթակետով և 8-րդ կետով նախատեսված՝ հերթերի կառավարման համակարգին միանալու հնարավորության մասին գրավոր հավաստում տրամադրելուց հետո 3

աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեն, դիմումատուի հետ միասին, իրականացնում է էլեկտրոնային համակարգերի փոխգործելիության թեստավորում, և թեստավորման դրական արդյունքի դեպքում՝ կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է կուտակային կայանատեղիի գործարկման մասին տեղեկություն, ինչին հաջորդող աշխատանքային օրվանից կուտակային կայանատեղին համարվում է գործող: Թեստավորման բացասական արդյունքի դեպքում՝ սույն կետով սահմանված ժամկետը կասեցվում է՝ մինչև թեստավորման դրական արդյունքի գրանցումը:

3. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ, ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ, ՄԱԿԵՐԵՍԻՆ, ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Հերթերի կառավարման համակարգին միանալու նպատակով կուտակային կայանատեղիների կառուցվածքին, տեղակայմանը, մակերեսին և գույքային հագեցվածությանը ներկայացվող պահանջներն են՝

1) կայանատեղին բեռնատար տրանսպորտային միջոցների կայանման համար պետք է ունենա առնվազն 3000 մետր քառակուսի մակերեսով բետոնապատ կամ ասֆալտապատ տարածք՝ յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի կայանման համար նախատեսված գծանշումով և համարակալումով.

2) կայանատեղիի տարածքն ամբողջ շրջագծով պետք է ունենա պարիսպ՝ պատրաստված քարից, բետոնից, ցանցապատ կամ այլ նյութից, որն ապահովում է տարածքի մեկուսացվածությունը.

3) կայանատեղիում պետք է պահպանվեն հրդեհային անվտանգության կանոնները, որը հավաստվում է Հայաստանի Հանրապետության հրդեհային անվտանգության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից անցկացվող հետազոտության կամ ստուգման արդյունքներով տրամադրված եզրակացության հիման վրա: Նշված հավաստումն իրականացվում է դիմումատուի կողմից հերթերի կառավարման համակարգին միանալու նպատակով

սույն որոշմամբ սահմանված դիմումի ներկայացումից առաջ կամ դրան զուգահեռ, ինչպես նաև տարեկան պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ավարտը.

4) կայանատեղիի տարածքը պետք է ունենա մուտքի և ելքի ուղեփակոց (արգելափակոց).

5) կայանատեղին պետք է ունենա էլեկտրոնային համակարգ, որը պետք է փոխազդի հերթերի կառավարման համակարգի հետ և հնարավորություն ունենա հավաքագրելու և մաքսային մարմիններին հերթերի կառավարման համակարգի միջոցով առցանց ռեժիմով տրամադրելու տեղեկատվություն կայանատեղիի նույնականացման տվյալի, բեռնատար տրանսպորտային միջոցի՝ կայանատեղի մուտք և ելք գործելու ամսաթվի, ժամի, բոպեի, վայրկյանի, բեռնատար տրանսպորտային միջոցի համարանիշի, տրանսպորտային միջոցի տեսակի՝ ըստ սույն որոշմամբ սահմանված առաջնահերթությունների վերաբերյալ, բեռի պարունակության կամ մաքսային հայտարարագրերի վերաբերյալ.

6) կայանատեղին պետք է ունենա մուտքի և ելքի ժամանակ բեռնատար տրանսպորտային միջոցի համարանիշն արձանագրող տեսախցիկ, որը պետք է ինտեգրված լինի սույն կետի 5-րդ ենթակետում նշված՝ կայանատեղիի էլեկտրոնային համակարգին.

7) կայանատեղիի ամբողջ տարածքը պետք է ապահովված լինի լուսավորությամբ.

8) կայանատեղին պետք է ունենա կայանատեղիի ամբողջ տարածքի հեռակառավարվող տեսախցիկներով տեսադիտման և ձայնագրման հնարավորություն, ընդ որում, տեսագրված և ձայնագրված նյութերը, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջների պահպանմամբ, պետք է պահպանվեն յուրաքանչյուր օրվա համար առանձին՝ համակարգչում կամ ցանկացած արտաքին կրիչի վրա, որը հնարավորություն կընձեռի պարզորոշ դիտելու և լսելու կատարված տեսագրությունն ու ձայնագրությունը՝ համարակալելով ըստ այդ օրերի ամսաթվերի: Տեսագրություններում պետք է նշվեն նաև տեսագրման ամսաթիվը և ժամը: Տեսագրված և ձայնագրված նյութերը պետք է պահպանվեն առնվազն 60 օր:

Կոմիտեի համար պետք է ապահովվի կայանատեղիում տեղադրված տեսահսկման համակարգերին առցանց հասանելիություն.

9) կայանատեղին պետք է ունենա ազդարարման համակարգ (ներառյալ մեկ կամ ըստ տարածքի անհրաժեշտության՝ բավարար քանակի մոնիթորներ), որը հնարավորություն կտա ազդարարել կայանատեղիից ելքի ենթակա տրանսպորտային միջոցի համարանիշը և հերթագրման համարը.

10) կայանատեղիի էլեկտրոնային համակարգը պետք է ունենա սույն որոշմամբ սահմանված առաջնահերթություններին համապատասխան առանձնացված հերթերի վարման հնարավորություն.

11) կայանատեղին պետք է ունենա առանձին օգտագործելու հնարավորությամբ առնվազն թվով 3 սանհանգույց:

11. Կուտակային կայանատեղիների կողմից կիրառվող էլեկտրոնային համակարգը պետք է ապահովի մաքսային մարմնի հերթերի կառավարման համակարգի հետ փոխազդեցությունը: Կուտակային կայանատեղիի էլեկտրոնային համակարգի կողմից առցանց նախապես հերթի ամրագրման հնարավորություն ունենալու պարագայում, հերթերի կառավարման համակարգին փոխանցվում են կայանատեղիի էլեկտրոնային համակարգի կողմից նախապես ստացված տվյալները:

12. Դիմումատուի՝ հերթերի կառավարման համակարգին հասանելիություն ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում, կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է կուտակային կայանատեղիների գործունեություն իրականացնող անձի կողմից սույն հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ներկայացված հերթագրման ծառայությունների վճարի չափը:

13. Կուտակային կայանատեղիների գործունեություն իրականացնող անձը, կուտակային կայանատեղիի շահագործման ընթացքում, հերթագրման ծառայությունների վճարի չափի փոփոխության դեպքում, պարտավոր է այդպիսի փոփոխությունն իրականացնելու օրվանից առնվազ 5 աշխատանքային օր առաջ ծանուցել կոմիտեին վճարի փոփոխվող չափի վերաբերյալ, որը հրապարակվում է կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում՝ կոմիտեի կողմից դրա վերաբերյալ տեղեկատվությունն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

14. Հերթերի կառավարման համակարգի շահագործումը մեկնարկելուց անմիջապես հետո՝ կուտակային կայանատեղիների գործունեություն իրականացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը պետք է ապահովի շուրջօրյա, անընդհատ աշխատանքային ռեժիմով կուտակային կայանատեղիի գործունեությունը:

15.Կուտակային կայանատեղիների տարածքում առևտրային գործունեություն կարող է իրականացվել մաքսային մարմինների թույլտվությամբ:

4. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

16. Կուտակային կայանատեղիների շահագործման ընթացքում՝ բեռնատար տրանսպորտային միջոցի հերթագրման ծառայությունների վճարի՝ սահմանված չափից ավելի չափով գանձման դեպքեր բացահայտվելու դեպքում՝ հերթերի կառավարման համակարգին միանալու հավաստում ստացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ սույն հավելվածի շրջանակներում ծառայություն մատուցելու իրավունքը և հերթերի կառավարման համակարգին հասանելիությունը կոմիտեի կողմից կայացվող որոշմամբ դադարեցվում են, որից հետո տվյալ անձը հերթերի կառավարման համակարգին միանալու համար սույն հավելվածով նախատեսված դիմումը կարող է ներկայացնել հասանելիության դադարեցումից վեց ամիս հետո:

17.Կուտակային կայանատեղիների շահագործման ընթացքում՝ սույն հավելվածի 10-րդ կամ 14-րդ կետերով սահմանված պահանջների չպահպանման դեպքեր բացահայտվելու դեպքում՝ հերթերի կառավարման համակարգին միանալու հավաստում ստացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ սույն հավելվածի շրջանակներում ծառայություն մատուցելու իրավունքը և հերթերի կառավարման համակարգին հասանելիությունը կոմիտեի կողմից կայացվող որոշմամբ կասեցվում են, ինչի մասին կոմիտեն էլեկտրոնային եղանակով ծանուցում է անձին:

18. Սույն հավելվածի 17-րդ կետով նախատեսված ծանուցումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում թերությունների շտկման դեպքում անձը

ծանուցում է կոմիտեին, որից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում հերթերի կառավարման համակարգին հասանելիությունը վերականգնվում է, իսկ թերությունները չշտկվելու պարագայում՝ դադարեցվում, որից հետո տվյալ անձը հերթերի կառավարման համակարգին միանալու համար սույն հավելվածով նախատեսված դիմումը կարող է ներկայացնել հասանելիության դադարեցումից վեց ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

24.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ